



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ASU THE MELIKIAN CENTER:
Russian, Eurasian & East European Studies
ARIZONA STATE UNIVERSITY



Գենդերային բաղադրիչի ներառումը Հայաստանում ՏՀՏ ոլորտի զարգացման ու տեղեկատվական հասարակության կառուցման քաղաքականություններում

Նարինե Աբազյան

Անի Մանուկյան

- ☞ *Narine Abazian*
- ☞ *Ani Manukyan*
- ☞ *Center for Gender and Leadership Studies*

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Երևան 2014



Շնորհակալության խոսք

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությանը, Բարձրագույն կրթությունը հանուն զարգացման (HED) ծրագրին, Արիզոնայի պետական համալսարանին ու Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնին՝ **”Գենդերային քաղաքիչի ներառումը Հայաստանում S2S ոլորտի զարգացման ու տեղեկատվական հասարակության կառուցման քաղաքականություններում”** խորագրով փոքր դրամաշնորհի իրականացման գաղափարն աջակցելու համար:

Խորապես շնորհակալ ենք այն բոլոր անձանց, ովքեր աջակցեցին դրամաշնորհի իրականացման գործընթացին իրենց արժեքավոր խորհուրդներով՝ Գոհար Շահնազարյան (Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի տնօրեն), Վիկտոր Աղաջանյան (Հայաստանում Կանանց առաջնորդության ծրագրի ղեկավար), Անահիտ Խաչատրյան (նախագծի ղեկավարման մասնագետ, ԱՄՆ ՄԶԳ):

Բովանդակություն

1. Ընդհանուր ամփոփում	5
2. Խնդրի նկարագրությունն ու հետազոտության նպատակը	7
2.1 Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովը և կանայք որպես տեղեկատվական հասարակության կարևոր դերակատարներ	9
2.2 Կանանց հզորացումը տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով, Հեռահաղորդակցության միջազգային միության N70 բանաձևը	10
2.3 Էլեկտրոնային հասարակության, ՏՀՏ ոլորտի զարգացման հայեցակարգերը ՀՀ-ում և կանայք	11
2.4 Գենդերային քաղաքականության հայեցակարգն ու դրա իրականացումը ՏՀՏ ոլորտում	12
3. Մեթոդաբանությունը	12
3.1 Տարբեր աղբյուրներից հավաքագրված տվյալներ ու տեղեկատվություն	13
3.2 Երկխոսությունների նախաձեռնում, հանդիպումների կազմակերպում	14
3.3 Ծորումներ, միջոցառումներ, հարցումներ	16
3.4 Առաջարկներ, միջազգային գործունեություն	18
4. Հետազոտության վերջնարդյունքները	19
4.1 Գենդերային-զգայուն և տարաբաժանված ՏՀՏ ցուցիչներն ու վիճակագրությունն ըստ կրթության, աշխատուժի, ձեռներեցության, առաջնորդության ու գյուղական համայնքներում ՏՀՏ հասանելիության	19
4.2 Գենդերային բաղադրիչի ներառումը ՏՀՏ ոլորտի զարգացման ու տեղեկատվական հասարակության կառուցման քաղաքականություններում	26
4.3 Հատուկ ծրագրեր ու միջոցառումներ գենդերային քաղաքականության 2011-2014 գործողությունների ծրագրերում՝ հաղթահարելու համար ՏՀՏ ոլորտում գենդերային անհավասարությունը	26
4.4 Բազմակողմ համագործակցություն գենդերային քաղաքականության ու գործողությունների ծրագրում ՏՀՏ բաղադրիչը ներառելու համար	26
4.5 Գենդերային զգայուն ՏՀՏ ծրագրեր պլանավորման, բյուջետավորման ու իրականացման գործընթացներում	27
5. Առաջարկություններ	28
6. Եզրակացություն	31
7. Հապավումների ու գրականության ցանկ	32

8. Հավելվածներ.....	34
Հավելված 1. “ՏՀՏ ոլորտի աղջիկների միջազգային օրը” Հայաստանում	34
Հավելված 2. “Թվային գրագիտությունը Հայաստանի կին ձեռներեցների համար”	36
Հավելված 3. Հարցաթերթի օրինակ	37

1. *Ընդհանուր ամփոփում*

Վերջին մի քանի տարիների ընթացքում աշխարհին ականատես է լինում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) արագ զարգացմանը: Այսօր աշխարհն արդեն թվայնացված է: Աշխատանքների գրեթե 95% ունի թվային բաղադրիչ ու այն ավելի կաճի ապագայում: Հետևապես, Հայաստանին անհրաժեշտ են ավելի շատ ՏՀՏ ոլորտի բարձրակարգ մասնագետներ, այդ թվում աղջիկներ ու կանայք:

Մենք ապրում ենք տեղեկատվական հասարակության (էլեկտրոնային հասարակության) դարաշրջանում: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները գործիքներ են, որ կարող են խթանել գենդերային հավասարությանը, կանանց հզորացմանը, իսկ հասարակությունը կշահի ՏՀՏ ծառայությունների հավասար հասանելիությունից ու կանանց հավասար մասնակցությունից՝ որոշումներ կայացնելու քաղաքականություններում:

Ինչ վերաբերում է կանանց կրթությանը, աշխատուժին, ՏՀՏ հասանելիությանը, ձեռներեցությանը, առաջնորդությանը, ապա դեռևս անբավարար է նոր կադրերի համալրումը, առաջխաղացումը ու մասնակցությունը, քանի որ կանայք Հայաստանում քիչ են ներկայացված ՏՀՏ ոլորտի բոլոր մակարդակներում:

Այս միտումը կշարունակվի ՏՀՏ աշխատաշուկայում ու տեղեկատվական հասարակության զարգացման գործընթացներում, եթե նոր քայլեր չձեռնարկվեն, որպեսզի կանայք ու աղջիկները կրթվեն, աջակցություն ստանան ու ոգևորվեն, ցուցադրվի ՏՀՏ ոլորտում հաջողության հասած կանանց օրինակը (դերային մոդելներ) ու վերջապես ներառվի գենդերային բաղադրիչը ՏՀՏ ու տեղեկատվական հասարակության (ՏՀ) զարգացման քաղաքականություններում:

Սույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ՝

- *Կանանց մասին վիճակագրությունը ՏՀՏ ոլորտում գրեթե բացակայում է:*
- *Գոյություն ունեցող վիճակագրությունը խոսում է ոլորտում առկա խնդիրների մասին:*
- *Գենդերային բաղադրիչը ներառված չէ Հայաստանի ՏՀՏ զարգացման, տեղեկատվական հասարակության կառուցման հայեցակարգերում, ազգային լայնաշերտ ինտերնետի ռազմավարության մեջ:*
- *Չնայած ՀՀ կառավարության կողմից ՏՀՏ և տեղեկատվական հասարակության վերաբերվող միջազգային փաստաթղթերի ստորագրմանը, Հայաստանում տեղեկատվական հասարակության մեջ կանանց ակտիվ մասնակցությունը աջակցող միջոցառումները բացակայում են:*
- *Գենդերային քաղաքականության միջոցառումների 2011-2014թթ ծրագրերում տեղեկատվական հասարակության և ՏՀՏ ոլորտի մասով ծրագրեր, միջոցառումներ չկան:*
- *Գենդերային քաղաքականության գործողությունների ծրագրերը կազմվում են ոչ բոլոր նախարարությունների մասնակցությամբ, ինչպես օրինակ բացակայում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:*

Չընդունելով որ կանայք և աղջիկները քիչ են ներկայացված ՏՀՏ զարգացման քաղաքականության ու կառավարման մեջ, մենք սահմանափակում ենք մեր հասարակության հնարավորությունները: Կանայք ու աղջիկները ոչ միայն պետք է աշխատատեղ փնտրեն, այլ իրենք ստեղծեն և առաջարկեն աշխատատեղեր՝ դառնալով կարևոր դերակատարներ տեղեկատվական հասարակության կառուցման գործում: Դա իրականացնելու համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի աջակցությունը:

Սույն հետազոտության նպատակն է, հիմք ընդունելով ՀՀ –ում գոյություն ունեցող կանանց և ՏՀՏ հարցերին վերաբերող հայեցակարգերը, մշտադիտարկել՝

- գենդերային քաղաքականության իրականացումը, մասնավորապես ՏՀՏ ոլորտում, ինչ հատուկ ծրագրեր և միջոցառումներ են մշակվել և իրականացվել գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու համար:
- Գենդերային բաղադրիչի ընդգրկումը Հայաստանում ՏՀՏ զարգացման քաղաքականության և տեղեկատվական հասարակության կառուցման գործում:
- Բարեփոխումային առաջարկություններ անել կանանց ներգրավվածության առնչությամբ ՏՀՏ ոլորտի քաղաքականության ու գործողությունների ծրագրում:

Սույն հետազոտության արդյունքների հիման վրա կատարված առաջարկությունները (էջ 28) խմբավորված և ուղղորդված են հանրային, մասնավոր սեկտորներին, հասարակական կազմակերպություններին և միջազգային կառույցներին, որոնց աջակցությունն է ակնկալվում՝ նպաստելու կանանց դերակատարման բարձրացմանը տեղեկատվական հասարակության կառուցման գործում.

Մասնավորապես՝

- *Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի աջակցությունն ու միջնորդությունը ստանալ՝ վերը նշված առաջարկությունները ներկայացնելու համար Գենդերային թեմատիկ թիմին, որպեսզի դրանք քննարկվեն 2016-2020թթ-ի գենդերային ռազմավարական պլանի մշակման համատեքստում:*
- *Նախարարությունների աջակցությունը ստանալ, որպեսզի վերը նշված առաջարկությունները ներառվեն ռազմավարական հայեցակարգերում ու գործողությունների ծրագրերում: Մասնավորապես կազմակերպել քննարկում կլոր սեղանի շուրջ ՀՀ էկոնոմիկայի, տրանսպորտի ու կապի, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների համապատասխան մասնագետների հետ:*
- *Խորհրդատվություն ու ֆինանսական աջակցություն ստանալ միջազգային ու դոնոր կազմակերպություններից՝ իրականացնելու համար վերը նշված հայեցակարգերն ու գործողությունների ծրագրերն ու խթանել ”կանանց ու ՏՀՏ համայնքների միջև” կապերը: Դրա վառ օրինակներից է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությունն այս նախագծին:*

- Միջազգային կազմակերպությունների կողմից աջակցություն ստանալ՝ լավագույն փորձի, ուղեցույցների ու խորհրդատվության տեսքով (ՀՄՄ, ՄԱԿ-ի կանայք, ՄԱԿ-ի կազմակերպությունները, ԵՄ և այլն):
- Մասնագիտական ինստիտուտներից, կրթական հաստատություններից, ասոցիացիաներից ու հասարակական կազմակերպություններից աջակցություն ստանալ՝ խթանելու համար հայեցակարգերի ու գործողությունների ծրագրերի իրականացմանը, ներառյալ վիճակագրական տվյալների հավաքագրում ու դրանց համակարգում (ԻՏՁՄ, ՁԻՀ, ՀԱՀ, ԵՊՀ, Կանայք և տեղեկատվական հասարակությունը և այլն):
- Մասնավոր ՏՀՏ կազմակերպությունների աջակցությունը ստանալ՝ խթանելու համար հայեցակարգերի ու գործողությունների ծրագրերի իրականացմանը, ներառյալ մասնագիտական ու ֆինանսական աջակցությունը՝ մրցույթների, ուսուցման, մրցանակաբաշխությունների ու այլ միջոցառումների կազմակերպման համար (ՏՀՏ ձեռնարկություններ):

Հետազոտողները նշված հետազոտությունը հիմնավոր փաստաթուղթ են դիտարկում ու ծրագրում են հանդիպումներ ունենալ հանրային, մասնավոր սեկտորների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ՝ հետազոտության արդյունքում ներկայացված առաջարկությունները քննարկելու ու դրանք կյանքի կոչելու համար:

2. Խնդրի նկարագրությունն ու հետազոտության նպատակը

Հայաստանի հանրապետության կառավարությունը հռչակել է ՏՀՏ-ն որպես երկրի տնտեսության առաջնահերթ ոլորտներից մեկը՝ ելնելով ոլորտի աճող կարևորությունից: Չնայած այն փաստին, որ վերջին տարիներին զգալի աճ է գրանցվել ՏՀՏ ոլորտում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանանց կրթությունը, աշխատուժը, ՏՀՏ հասանելիությունը, ձեռներեցությունը, առաջնորդությունը, նոր կադրերի համալրումը, առաջխաղացումն ու մասնակցությունը անբավարար են, քանի որ կանայք Հայաստանում քիչ են ներկայացված ՏՀՏ ոլորտի բոլոր մակարդակներում:

Անժխտելի փաստ է, որ տեղեկատվական հասարակություն կառուցելու համար, մեծ թվով մասնագետներ են պահանջվում ՏՀՏ ոլորտում: Կանանց ցածր մասնակցությունը ՏՀՏ ոլորտում ներկայումս կարևոր հիմնահարց է: Թեպետ կանանց զբաղվածությունը Հայաստանում 41.1% է, թիվը շատ ավելի ցածր է ՏՀՏ ոլորտում: Տղամարդիկ ՏՀՏ ոլորտում աշխատող մասնագետների մեծամասնությունն են կազմում:

Երկրի մրցունակության ամենակարևոր ուղղորդիչներն են՝ մարդկային կապիտալը, հմտությունները, կրթությունն ու աշխատուժի արդյունավետությունը: Կանայք կազմում են մարդկային կապիտալի, հետևապես պոտենցիալ տաղանդների ուղիղ կեսը: Ուստի, գենդերային անհավասարությունը հաղթահարելը ոչ միայն մարդու իրավունքների ու հավասարության խնդիր է, այլ նաև մրցունակ տնտեսության զարգացման նախապայման:

Բիզնես ոլորտի առաջնորդներն ու քաղաքականություն մշակողները պետք է միասին աշխատեն, որպեսզի վերացնեն այն բոլոր խոչընդոտները, որ կանայք հանդիպում են իրենց ճանապարհին՝ ՏՀՏ ոլորտ մուտք գործելու ժամանակ ու դրանց փոխարեն ներդնել համապատասխան գործընթացներ ու քաղաքականություններ, որոնք հավասար հնարավորություններ կապահովեն կանանց համար ՏՀՏ ոլորտում առաջնորդային պաշտոններ գրավելու համար:

Ազգային ռազմավարություններում անհրաժեշտ է ապահովել, որ կանայք ու տղամարդիկ հավասար հասանելիություն ունենան հեռահաղորդակցական/ՏՀՏ միջոցներին, ու որ դրանք հաջողությամբ օգտագործվեն աղջիկների ու կանանց սոցիալական ու տնտեսական հզորացման համար: Ինչպես ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար՝ Բան Քիմունն է ասում՝ "Երբ կանայք կրթված ու հզորացած են, ապա տնտեսություններն ավելի արդյունավետ ու ուժեղ են: Այն երկրներում որտեղ կանայք լիակատար ներգրավվածություն ունեն՝ հասարակություններն ավելի խաղաղ ու կայուն են":

Սույն հետազոտությունը նպատակ էր հետապնդում մշտադիտարկել 2011-2014թթ-ի գենդերային քաղաքականության հայեցակարգի ու գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագրի իրականացումը, մասնավորապես՝ գենդերային չափորոշիչների ընդգրկումը ՏՀՏ ոլորտում և առաջարկել հատուկ ծրագրեր ու միջոցառումներ՝ հաղթահարելու համար գենդերային անհավասարակշռությունն ու ընդլայնելու կանանց հնարավորությունները ՏՀՏ ոլորտի զարգացման ու տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացներում:

Հետազոտության հիմնական խնդիրներն էին՝

- Մշտադիտարկել գենդերային ցուցիչների ու թիրախների մշակումն ու առկայությունը ՏՀՏ ու ՏՀ զարգացման քաղաքականությունների մեջ ու դրանց իրականացումը:
- Մշտադիտարկել գենդերային բաղադրիչի ներգրավումը ՏՀՏ ծրագրերում՝ դրանց պլանավորման, բյուջետավորման ու իրականացման գործընթացներում:
- Առանձնացնել բարեփոխումների առաջարկներ՝ հավանական ռազմավարություններ, ընդգրկելու համար գենդերային քաղաքականության գործողությունների ծրագրերում ՏՀՏ-ն:

Ամփոփելով վերը նշվածը, սույն հետազոտության նպատակն էր, հիմք ընդունելով ՀՀ գոյություն ունեցող կանանց և ՏՀՏ հարցերին վերաբերող հայեցակարգերը, մշտադիտարկել՝

- գենդերային քաղաքականության իրականացումը, մասնավորապես ՏՀՏ ոլորտում, ինչ հատուկ ծրագրեր և միջոցառումներ են մշակվել և իրականացվել գենդերային անհավասարակշռությունը հաղթահարելու համար:
- գենդերային բաղադրիչի ընդգրկումը Հայաստանում ՏՀՏ զարգացման քաղաքականության և տեղեկատվական հասարակության կառուցման գործում,

ինչպես նաև բարեփոխումային առաջարկություններ անել կանանց ներգրավվածության առնչությամբ ՏՀՏ ոլորտի քաղաքականության ու գործողությունների ծրագրում:

ՀՀ կառավարության կողմից ընդունված հայեցակարգերը, որոնք առնչվում են այս հիմնահարցերին, ինչպես նաև համապատասխան միջազգային փաստաթղթերը հիմք են հանդիսացել հետազոտության իրականացման համար: Փաստաթղթերը ներկայացված են ստորև՝ 2.1-2.4 կետերում:

2.1 Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովը և կանայք որպես տեղեկատվական հասարակության կարևոր դերակատարներ

Արդյունաբերական դարաշրջանին փոխարինելու է եկել տեղեկատվական հասարակության դարաշրջանը (էլեկտրոնային հասարակությանը): 2003թ.-ին ժնկում և 2005 թ.-ին Թունիսում տեղի ունեցան Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովները (ՏՀՀԳ) երկու փուլով, որտեղ ՄԱԿ-ի 176 անդամ երկրներ, Հայաստանը ներառյալ, **հավաքվել էին հռչակելու** “համընդհանուր ցանկությունն ու պարտավորվածությունը կառուցելու համար բոլորին հասանելի ու զարգացման միտում ունեցող տեղեկատվական հասարակություն, որտեղ յուրաքանչյուրը կարող է օգտվել ՏՀՏ ոլորտի առաջարկած հնարավորություններից”:

Թունիսի ու ժնկի համաշխարհային գազաթաժողովների կողմից ընդունված փաստաթղթերն էին՝

- Ժնկի սկզբունքների հռչակագիրը,
- Ժնկի գործողությունների ծրագիրը,
- Թունիսի գազաթաժողովում որդեգրած պարտավորվածությունները,
- Տեղեկատվական հասարակության Թունիսյան օրակարգը:

ՄԱԿ-ի անդամ երկրները համաձայնեցին, որ **տեղեկատվական հասարակություն** ձևավորելու համար, որտեղ յուրաքանչյուրը կարող է ստեղծել, իրեն համար հասանելի դարձնել, օգտագործել, տարածել տեղեկատվություն ու գիտելիքներ, ու լավացնել կյանքի որակը, անհրաժեշտ է՝

- բոլոր շահագրգիռ կողմերին աշխատել միասին,
- լավացնել տեղեկատվության ու հաղորդակցության ենթակառուցվածքների ու տեխնոլոգիաների հասանելիությունը,
- լավացնել տեղեկատվության ու գիտելիքների հասանելիությունը,
- ստեղծել ներուժ
- մեծացնել ՏՀՏ-ների կիրառման վստահությունն ու անվտանգությունը,
- բարենպաստ միջավայր ստեղծել բոլոր մակարդակներում,
- զարգացնել ու մեծացնել ՏՀՏ կիրառումը՝

- Էլ-կառավարում,
- Էլ-բիզնես,
- Էլ-ուսուցում,
- Էլ-առողջապահություն,
- Էլ-գրադավածություն,
- Էլ-շրջակա միջավայր,
- Էլ-գյուղատնտեսություն,
- Էլ-գիտություն,

- խթանել ու հարգել մշակութային բազմազանությունը,

- գիտակցել մեդիայի դերը,

- հասցեականացնել տեղեկատվական հասարակության էթիկական կողմերը,

- խթանել միջազգային ու տարածաշրջանային համագործակցությունը:

Մրանք են բոլորի համար հասանելի տեղեկատվական հասարակության ձևավորման հիմնական սկզբունքները:

Գազաթաժողովի բոլոր երկրները՝ ներառյալ Հայաստանը, պարտավորվեցին մշակել ազգային էլեկտրոնային ռազմավարություններ (E-Strategy) մինչև 2010թ ու համաձայնեցին, որ **“ՏՀՏ-ի զարգացումը մեծ հնարավորություններ է ստեղծում կանանց համար, ովքեր պետք է դառնան տեղեկատվական հասարակության անբաժանելի մասն ու կարևոր դերակատարները”**:

Երկրները պարտավորվում էին ապահովել այնպիսի տեղեկատվական հասարակություն, որ կխթանի կանանց հզորացմանն ու նրանց լիիրավ մասնակցությանը՝ հավասարության հիմքի վրա, հասարակության բոլոր ոլորտներում և որոշումներ կայացնելու գործընթացներում: Այս տեսանկյունից նրանք ստանձնում էին գենդերային հավասարության ապահովողի դերն ու կիրառում ՏՀՏ-ները որպես գործիքներ դրան հասնելու համար (ՏՀՀԳ, Սկզբունքների հռչակագիր): ՏՀՏ-ի կիրառման ու կարիքների գենդերային առանձնահատուկ ցուցիչներ պիտի մշակվեն ու առանձնացվեն չափելի ցուցիչներ՝ գնահատելու համար ՏՀՏ նախագծերի ազդեցությունը կանանց ու աղջիկների կյանքի բարելավման վրա:

2.2 Կանանց հզորացումը տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով, Հեռահաղորդակցության միջազգային միության N70 բանաձևը

Հեռահաղորդակցության միջազգային միությունը (ՀՄՄ) լինելով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) այն գործակալությունը, որը պատասխանատու է տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների համար, քաջալերում է իր 193 անդամ երկրներին դիտարկելու ՏՀՏ-ն որպես կատալիզատոր, որ բացում է հեռահար հնարավորություններ կանանց ու աղջիկների համար, նվազեցնելով գենդերային անհավասարություններն ու հզորացնելով կանանց: Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից ընդունված N 70 բանաձևը, (Բուսան 2014) կոչ է անում բոլոր շահագրգիռ կողմերին ընդունելու քաղաքականություններ ու ռազմավարություններ, որ կխթանեն ՏՀՏ հնարավորությունները

կանանց ու աղջիկների համար: ՀՀ կապի ու տրանսպորտի նախարարությունը Հեռահաղորդակցության միջազգային միության անդամ երկիր է 1992-ից:

2.3 Էլեկտրոնային հասարակության, ՏՀՏ ոլորտի զարգացման հայեցակարգերը ՀՀ-ում և կանայք

Տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների աճող կարևորությունից ելնելով ՀՀ կառավարությունը հռչակեց ՏՀՏ ոլորտը Հայաստանի տնտեսության առաջնահերթային ոլորտներից մեկը: 2008թ-ին ՀՀ կառավարությունն ընդունեց (2008-2018) ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգն ու գործողությունների ծրագիրը: 2010թ-ին կառավարությունն ընդունեց էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010-2012):

2011թ-ին՝ “Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության” հայեցակարգն ընդունվեց, որն իր մեջ ներառում էր 13 նախագիծ, դրանց թվում նաև “ՏՀՏ ու էլ.հասարակության նախաձեռնությունները”:

Կառավարական մարմինը, որը պատասխանատու է իրականացնելու այս ռազմավարություններն ու ՏՏ ոլորտի զարգացումը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է:

Տեղեկատվական հասարակությունն ձևավորելու համար Հայաստանին անհրաժեշտ են ՏՀՏ ոլորտում աշխատող մեծ թվով մասնագետներ: Չնայած վերջին տարիներին ՏՀՏ ոլորտում գրանցված զգալի աճին, այդուհանդերձ հետազոտությունները ցույց են տալիս, որ ՏՀՏ ոլորտում կանանց կրթության, աշխատուժի, ձեռներեցության, առաջնորդության հարցերում համալրումը, մասնակցությունը ու առաջխաղացումը ցածր է:

Կանայք քիչ են ներգրավված ՏՀՏ ոլորտի բոլոր մակարդակներում ու հատկապես նրանք քիչ են որոշումներ կայացնելու պաշտոններում: Մոտավորապես 360 ՏՀՏ ձեռնարկություններից Հայաստանում ըստ 2012թ-ի տվյալների կանայք կազմում են ձեռնարկությունների գլխավոր տնօրենների ու նախագահների ընդամենը 1.3%: Աշխատելով տղամարդկանց կողմից գերիշխող ՏՀՏ ոլորտում, կին աշխատակիցները կազմում են տեխնիկական մասնագետների 30 տոկոսը, ՏՀՏ մենեջերների՝ 15 տոկոսն ու ընդամենը 1.3 տոկոսը որպես ռազմավարական ու պլանավորման ղեկավարներ: ՏՀՏ ոլորտն ու տեղեկատվական հասարակությունն այսօր համալրել մեծ թվով կանանցով, հատկապես գլոբալ տնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում, սոցիալական արդարության հարց չէ միայն, այլ տնտեսական աճի ու մրցունակության: ՏՀՏ սեկտորին ինտեգրվելու համար մեծ թվով կանանց ու աղջիկների քաջալերումը համապատասխանում է ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակին, այն է գենդերային հավասարության ու կանանց հզորացման խթանում:

Կանանց ցածր մոտիվացիան ՏՀՏ ոլորտ մուտք գործելու, տնտեսության մեջ տաղանդների կորստի է բերում ու նվազեցնում կանանց աշխատաշուկա մտնելու հնարավորությունները: Սա միայն կանանց հիմնահարց չէ: Այս միտումը կշարունակվի, եթե քայլեր չձեռնարկվեն որպեսզի կրթեն, աջակցեն ու քաջալերեն աղջիկներին ու նրանց դերային մոդելներին և վերջապես ներառվի գենդերային բաղադրիչը ՏՀՏ ու տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականությունների մեջ:

2.4 Գենդերային քաղաքականության հայեցակարգն ու դրա իրականացումը ՏՀՏ ոլորտում

2010թ-ին ՀՀ կառավարությունն ընդունեց Գենդերային քաղաքականության հայեցակարգն ու համապատասխանաբար, Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագիրը 2011-2015 թթ, որն ընդունվեց 2011թ-ին: Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքն ընդունվեց 2013թ-ին:

Համաձայն հայեցակարգի՝ «Գենդերային քաղաքականությունը պիտի իրականացվի ներդնելով գենդերային չափորոշիչները սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում ու մշակելով հատուկ ծրագրեր ու միջոցառումներ՝ գենդերային անհավասարությունը հաղթահարելու ու կանանց հնարավորությունները մեծացնելու նպատակով»:

Սա նշանակում է, որ գենդերային քաղաքականությունը պիտի իրականացվի ներդնելով գենդերային չափորոշիչները մասնավորապես տեղեկատվական հասարակության և ՏՀՏ զարգացման ոլորտում ու մշակելով հատուկ ծրագրեր ու միջոցառումներ՝ գենդերային անհավասարությունը հաղթահարելու ու կանանց հնարավորությունները մեծացնելու նպատակով:

Համաձայն «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի հոդված 8-ի

Հոդված 8. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ինչպես նաև **Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը,**
- գենդերային հավասարության ապահովման համար գործուն իրավական և կազմակերպական **մեխանիզմների ստեղծումը,**
- գենդերային հավասարության հասնելուն ուղղված պետական նպատակային ծրագրերի և միջոցառումների մշակումն ու իրագործումը և դրանց **ֆինանսավորումը...**

Հետևապես 2.1, 2.2 կետերում նշված միջազգային փաստաթղթերը կարող են հիմք ծառայել ՏՀՏ ոլորտում գենդերային քաղաքականության իրականացման համար:

3. Մեթոդաբանությունը

Սույն հետազոտության մեթոդաբանությունը հիմնված էր տարբեր աղբյուրներից հավաքագրված տվյալների ու տեղեկատվության, ապացույցների ձեռք բերման, նախաձեռնած երկխոսության, կազմակերպած հանդիպումների, աշխատաժողովների վրա, ինչպես նաև

դրանց արդյունքում առանձնացված կարևոր խնդիրների ու մարտահրավերների, որ ամփոփվեց առաջարկություններով ու հաշվետվությամբ: Հետազոտությունն իրականացվել է քանակական ու որակական վերլուծությունների հիման վրա:

Հիմնական գործողություններն ու ակնկալվող արդյունքները հետևյալն են՝ հետազոտություն, հանդիպումներ, քննարկումներ, աշխատաժողովներ ու հաշվետվություն:

3.1 Տարբեր աղբյուրներից հավաքագրված տվյալներ ու տեղեկատվություն

Հետազոտության շրջանակում մենք ուսումնասիրել ենք հետևյալ փաստաթղթերը, ներառյալ օրենսդրությունը, հայեցակարգերը, քաղաքականություններն ու գործողությունների ծրագրերը՝

- N70 Բանաձև (վերանայված Բուսան 2014) Գենդերային հավասարության հեռանկարները Հեռահաղորդակցության միջազգային միությունում ու գենդերային հավասարության խթանումն ու կանանց հզորացումը տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով, Հեռահաղորդակցության միջազգային միություն/ՀՄՄ/
- Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովի վերջնական փաստաթղթեր՝ 2003-2005:
 - Ժնևի սկզբունքների հռչակագիր,
 - Ժնևի գործողությունների ծրագիր,
 - Թունիսի գազաթաժողովում որդեգրած պարտավորվածություններ,
 - Տեղեկատվական հասարակության Թունիսյան օրակարգ:
- ՀՀ ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգ 2008-2018թթ
- ՀՀ Էլ. հասարակության ձևավորման հայեցակարգ 2010-2012թթ
- ՀՀ Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ (2012-2020)
- ՀՀ Օրենքը “Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին” 2013
- ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ
- ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագիր 2011-2015թթ

Հասկանալու համար գենդերային բաղադրիչի ներառումը ՏՀՏ կրթության, աշխատուժի, ձեռներեցության, առաջնորդության ու ՏՀՏ հասանելիությունը Հայաստանի գյուղական վայրերում, մենք ուսումնասիրել ենք հետևյալ փաստաթղթերը՝

- Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն 2011թ., 2012թ., 2013թ., Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ
- Հայաստանում SS հմտությունների գնահատում, Համաշխարհային բանկ 2014թ.
- Կանանց ձեռներեցության խթանման հայեցակարգ, ՓՄՁ ԶԱԿ 2012թ.
- Կանանց ձեռներեցության ռազմավարությունը Հայաստանում, մշակված ու ֆինանսավորված Ասիական զարգացման բանկի կողմից, ՓԵՄ Քընսալտ 2013թ
- Հայաստանում կին ձեռներեցների համար բիզնեսի զարգացման ծառայությունների կարիքների գնահատման հաշվետվություն, ՓՄՁ ԶԱԿ 2013թ
- ՀՀ գենդերային քաղաքականության միջոցառումների ծրագրերը, 2011, 2012, 2013թթ
- Հայաստանի կապի և ՏՀՏ ցուցանիշները ըստ Հեռահաղորդակցության միջազգային միության, ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն 2011թ, 2012թ
- Հայաստանի կապի և ՏՀՏ ցուցանիշները ըստ Կապի տարածաշրջանային համագործակցության (ԿՏՀ), ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն 2011թ 2012թ:

3.2 Հանդիպումներ ու երկխոսության նախաձեռնում

Հետևյալ քայլերն են ձեռնարկվել երկխոսություններ նախաձեռնելու ու հանդիպումներ կազմակերպելու համար տեղական ու միջազգային կառույցների հետ`

- ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
- ՀՀ կրթության ու գիտության նախարարություն
- Տարածքային կառավարման գենդերային հարցերով մարզպետարաններին կից մշտական հանձնաժողովներ, մարզերի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչներ /Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Գյումրի/
- Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
- Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ
- Ասիական Զարգացման Բանկ
- Հեռահաղորդակցության միջազգային միություն
- ՄԱԿ-ի կանայք
- ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
- Արիզոնայի պետական համալսարան
- Աշխատանքի միջազգային կազմակերպություն
- Հայաստանում Եվրամիության պատվիրակություն

Համաձայն ՀՀ կառավարության 2010թ-ի փետրվարի 11-ի նստաշրջանի No 5 որոշման ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությանը վերապահվել է ՀՀ գենդերային քաղաքականության համակարգման լիազորությունը:

- ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունում հանդիպում տեղի ունեցավ կանանց հիմնահարցերի բաժնի պետ Արմենուհի Թանաշյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը՝

- Ինչպե՞ս է մշակվել գենդերային քաղաքականության գործողությունների ծրագիրը:
- Ինչպիսի՞ մասնակցություն են ունեցել բյուջեի կազմման աշխատանքներին և համակարգմանը:
- Արդյո՞ք հաստատված բյուջե կա գենդերային քաղաքականության գործողությունների ծրագրի համար ՏՀՏ բաղադրիչով:
- ՏՀՏ ոլորտի ի՞նչ ցուցիչներ կան և ինչպես է կատարվում մշտադիտարկում:
- Ո՞ր նախարարությունների հետ են համագործակցել ՏՀՏ բաղադրիչով գործողությունների ծրագրի ու բյուջեի մշակման ժամանակ:
- Ինչպիսի՞ մասնակցություն են ունեցել քաղաքապետարանն ու մարզպետարանները գործողությունների ծրագրի ու բյուջեի մշակման մեջ:
- Ո՞ր միջազգային կազմակերպություններն են աջակցել գործողությունների ծրագրի ու ՏՀՏ ցուցիչների մշակման մեջ:
- Համագործակցությունը ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ու վարչապետին կից կանանց խորհրդի միջև ՀՀ գենդերային քաղաքականության շուրջ:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հանդիպում Արտակ Բաղդասարյանի հետ՝ տնտեսական զարգացման քաղաքականության վարչության պետ, գենդերային ծրագրի համակարգող:

- ՀՀ կրթության ու գիտության նախարարություն
Հանդիպում Մարինե Աղաջանյանի հետ՝ ծրագրերի մշակման ու մշտադիտարկման վարչության ավագ մասնագետ:

- ՄՄԿ-ի զարգացման ծրագիր/UNDP/,
Հանդիպում գենդերային հավասարության ծրագրի պատասխանատու՝ Արմինե Հովհաննիսյանի ու դեմոկրատիկ կառավարման վերլուծաբան Ալլա Բակունցի հետ

- Հանդիպում Եվրամիության հանձնաժողով Հայաստանյան ներկայացուցիչ, ծրագրի մենեջեր Իրինա Մովսիսյանի հետ:

➤ *Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն*

Հանդիպում Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի, Կանանց ձեռներեցության զարգացման ծրագրի համակարգող՝ Գոհար Գաբուզյանի հետ:

➤ *Հանդիպումներ մարզերում/շրջաններում*

Հանդիպումներ Թամարա Գրիգորյան՝ Վանաձորի քաղաքապետարանի աշխատանքի ու տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ:

Կարինե Գրիգորյան՝ “Ագաթե” կենտրոնի նախագահ, Շիրակի մարզի կանանց հարցերի հանձնաժողովի անդամ:

➤ Հետազոտության շրջանակներում հետազոտողներից Անի Մանուկյանը հանդիպում է ունեցել Արիզոնայի պետական համալսարանի պրոֆեսոր Քիմբերլի Սքոթի հետ (2014թ-ին մեկ այլ ծրագրի շրջանակներում, Անի Մանուկյանը որպես այցելող հետազոտող էր Արիզոնայի պետական համալսարանի Սոցիալական փոխակերպումների ֆակուլտետում): Պրոֆեսոր Սքոթը Սպիտակ տան “S2S հասանելիության փոփոխությունների չեմպիոն” տիտղոսակիր, “Կոմփյուզիս” ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրենն է:

Արիզոնայի պետական համալսարանի պրոֆեսոր Քեմբերլի Սկոտի հետ հանդիպման նպատակն էր դիտարկել հավանական համագործակցությունը S2S ոլորտի կրթական ծրագրերում: Հանդիպումը երկու կողմին հնարավորություն տվեց համեմատել ու զուգադրել կանանց ներգրավվածությունը S2S ոլորտում Հայաստանում ու ԱՄՆ-ում ու դրանց հավանական զարգացումները:

Քիմբերլի Սքոթը վիդեո ուղերձ ուղարկեց S2S ոլորտի աղջիկների միջազգային օրվա առիթով կազմակերպված ֆորումի մասնակից հայ դպրոցական աղջիկներին (տես՝ հավելված 1)

3.3 Ֆորումներ, միջոցառումներ ու հարցումներ

Հետազոտության նպատակներից մեկն էր տեղեկատվական հասարակության մեջ կանանց հիմնահարցերն հասանելի դարձնել ավելի լայն շրջանակներին՝ տարբեր տեղեկատվական միջոցների օգնությամբ: Մենք պլանավորում ենք ներառել որպես մեր հետազոտության վերջնարդյունք կոնկրետ առաջարկություններ՝ ՀՀ գենդերային քաղաքականության գործողությունների պլանում կանանց ու աղջիկների ակտիվ մասնակցությամբ S2S ծրագրեր ու միջոցառումներ: Ստորև ներկայացված միջոցառումները, նախագծերը ընդամենը մի քանի օրինակներ են, որ կարելի է առաջարկել՝

- **“S2S ոլորտի աղջիկների միջազգային օրը”** այս տարի երրորդ անգամ նշվեց Հայաստանում : **“Ընդլայնենք հորիզոնները, փոխենք վերաբերմունքը”** **Ֆորումը** տեղի ունեցավ ապրիլի 25-ին, Հայաստանի Ամերիկյան Համալսարանում (ՀԱՀ): Այս միջոցառումը գերազանց հնարավորություն է խրախուսելու աղջիկներին

Հայաստանում, որպեսզի նրանք ընտրեն ՏՀՏ կարիերա: (մանրամասներն տես Հավելված 1. “ՏՀՏ ոլորտի աղջիկների միջազգային օրը” Հայաստանում):

- Ֆորումից հետո հարցաթերթ մշակվեց ու բաժանվեց մասնակիցների՝ դպրոցականների, ուսանողների ու մանկավարժների շրջանում, որպեսզի ունենանք իրենց կարծիքը, դիտողություններն ու առաջարկությունները: Հարցաթերթեր բաժանվեցին նաև Արիզոնայի պետական համալսարանի ուսանողների շրջանում, որն իրականացրեց Անի Մանուկյանը: Հարցաթերթի միջոցով ցանկություն կար բացահայտել ԱՄՆ-ում ուսանողների մոտեցումները ՏՀՏ ոլորտին, դերային մոդելների կարևորությանը, կարծիքները ՏՀՏ ոլորտում աղջիկներին խրախուսող միջոցառումների մասին: Հայաստանի և Արիզոնայի պետական համալսարանի հարցումների արդյունքները ամփոփվեցին, նաև համեմատվեցին: (տես ամփոփման մի մասը Հավելված 1-ում և հարցաթերթի օրինակը Հավելված 3-ում):

- Ձեռներեց կանայք Հայաստանում, ի տարբերություն իրենց տղամարդ գործընկերների, հատկապես գյուղական շրջաններում, հանդիպում են հատուկ մարտահրավերների և գործնական սահմանափակումների: ՏՀՏ-ն պետք է միջոց լինի օգնելու կանանց՝ հաղթահարելու այս խոչընդոտները, ինչպիսին են ֆինանսների հասանելության սահմանափակումը, ժամանակի սղությունը, շարժման սահմանափակումը, կրթության և հմտությունների պակասը:

Հգորացնել ձեռներեց կանանց ՏՀՏ-ի միջոցով, նշանակում է առաջին հերթին կրթել նրանց:

“Թվային գրագիտությունը Հայաստանի ձեռներեց կանանց համար” դասընթացը կազմակերպվեց Հայաստանի գյուղական շրջանների կին ձեռներեցների համար: Լրացուցիչ մանրամասների համար տես Հավելված 2:

- ՄԱԿ-ի կանանց կազմակերպության (UN Women) և Հեռահաղորդակցության Միջազգային Միության (ՀՄՄ) կողմից կազմակերպված ՋԵՄ-ՏԵԲ (GEM-TECH) մրցանակաբաշխությունը նպատակ ունի գնահատել այն կազմակերպությունների և անհատների բացառիկ նվաճումները, որոնց գործունեությունը ուղղորդված է տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) միջոցով կանանց վիճակի բարելավմանը և հասարակության մեջ նրանց դերի բարձրացմանը: 2014 թվ-ի մրցանակաբաշխությանը մասնակցած 75 երկրների ավելի քան 360 կազմակերպություններից և անհատներից եզրափակիչ դուրս եկան 36-ը, որոնց մեջ էր նաև Հայաստանից “Կանայք և տեղեկատվական հասարակությունը” կազմակերպությունը:

(տես հղումը՝ <http://www.itu.int/en/action/women/gem/Pages/award.aspx>)

3.3 Առաջարկներ, միջազգային գործունեություն

Հետազոտության նպատակներից մեկը՝ շահագրգիռ կողմերի հետ երկխոսության նախաձեռնումն էր, որ աջակցում են կառավարությունների քաղաքականություններին, իրականացմանը ու ապագա ուղղությունների ձևավորմանը:

Մենք պլանավորել էինք նախաձեռնել երկխոսություն Հեռահաղորդակցության միջազգային միության ու Հայաստանում միջազգային կազմակերպությունների հետ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Համաշխարհային բանկի, Եվրախորհուրդի և այլն:

- Մեր երկխոսության արդյունքում մենք առաջարկություններ ներկայացրեցինք Հեռահաղորդակցության միջազգային միությանը (ՀՄՄ), որը ներառվեց Խորհուրդի աշխատանքային խմբի կազմած հասարակական խորհրդատվության հաշվետվության մեջ՝ 2016-2019թթ ՀՄՄ ռազմավարական պլանի կազմման համար: Այն ներկայացվեց “Կանայք և տեղեկատվական հասարակությունը” կազմակերպության անունից: Առաջարկից (2/7 էջից) ներկայացված է մեջբերում՝

“Աջակցություն անդամ երկրներին՝ գենդերային բաղադրիչով S2S ազգային քաղաքականությունների, ռազմավարությունների ու պլանների մշակման գործընթացներում՝ կիսելով լավագույն փորձն ու ամփոփելով, ներկայացնել գենդերային-զգայուն և տարաբաժանված S2S ցուցիչներն, ցուցանիշները և վիճակագրությունը: Խթանել, քաջալերել գենդերային բաղադրիչի ներառումը S2S ազգային ծրագրերի պլանավորման, բյուջետավորման, ֆինանսական ռեսուրսների հատկացման ու իրականացման գործընթացներում”:

Տես լրացուցիչ մանրամասները հետևյալ վեբկայքում՝ <http://www.itu.int/en/council/wg-sfp/Documents/Final%20report.pdf>:

- Առաջարկ ներկայացվեց նաև, որը վերաբերվում էր Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովի տաս տարի անց (WSIS+10), 2015-ից հետո տեղեկատվական հասարակության նոր տեսլականն ու առաքելությունները ձևավորելու մեջ, կանանց և S2S խնդիրներին: Առաջարկը վերաբերվում էր տեղեկատվական հասարակության 1, 2, 6 գործունեության ուղղություններին:

<http://www.itu.int/wsisis/review/mpp/pages/consolidated-texts.html#statement>

Նարինե Աբազյանը, որպես “Կանայք և տեղեկատվական հասարակությունը” հ/կ նախագահ մասնակցեց միջազգային բարձր մակարդակի երկխոսություններում, WSIS+10 (Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողով +10)։

Տես Նարինե Աբազյանի հարցազրույցը WSIS+10 բարձր մակարդակի միջոցառման ժամանակ, Ժնև 9-13 հունիս 2014, կազմակերպված ՄԱԿ-ի կազմակերպությունների կողմից, http://www.youtube.com/watch?v=t0fo_NJvEkk :

4. Հետազոտության վերջնարդյունքները


4.1 Գենդերային-զգայուն և տարաբաժանված SՀS ցուցիչներն ու վիճակագրությունը ըստ կրթության, աշխատուժի, ձեռներեցության, առաջնորդության ու գյուղական համայնքներում SՀS հասանելիության

SՀS ոլորտում կանանց մասին վիճակագրությունը գրեթե բացակայում է: Գոյություն ունեցող վիճակագրությունը խոսում է ոլորտում առկա խնդիրների մասին:

- **Աշխատուժ**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուղղահայաց գենդերային տարաբաժանման դեպքում, ինչպես դասական դեպքերում է, կանանց մասնակցությունը գերակայում է SՀS ոլորտի ցածր մակարդակում: Չնայած կանայք միտում ունեն լինելու տեխնիկական ավագ մասնագիտական պաշտոններում, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեղի է ունենում ցածր մակարդակի աշխատանքների “ֆեմինիզացիա”:

Աղյուսակ1. Կանայք ու աղջիկները SՀS ոլորտում



2012-2013թթ-ի վիճակագրությունը ցույց է տալիս, որ՝

- Հայկական ՏՀՏ ոլորտում աշխատակիցների մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներն են: Տեխնիկական աշխատակիցների շարքում կանայք կազմում են ընդամենը 33%: Կին տնօրենները ղեկավարում են ՏՀՏ ընկերությունների 1.3%-ը: (Աղբյուր՝ Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն 2012թ., Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ)
- Հայկական ՏՀՏ ոլորտում աշխատակիցների մեծամասնությունը արական սեռի ներկայացուցիչներն են (69%): Ծրագրային ապահովման և ծառայությունների ոլորտի կին աշխատողների քանակը 2012 համեմատ նվազել է 3%-ով: (Աղբյուր՝ Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն 2013թ., Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ):
- Հեռահաղորդակցության ոլորտում տեխնիկական մասնագետների 27%-ը կանայք են, բջջային հեռահաղորդակցության ոլորտում տեխնիկական մասնագետների 9%-ն են կանայք (Աղբյուր՝ Հայաստանի կապի և ՏՀՏ ոլորտի ցուցանիշները ըստ Հեռահաղորդակցության միջազգային միության, ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն, 2012):

ՏՀՏ ոլորտում աշխատանք փնտրողների ընդամենը 14% են կանայք:

Աղյուսակ 2. Աշխատանք փնտրողներն ըստ ոլորտների

Ոլորտը	Կանայք (%)	Տղամարդիկ (%)
<i>Տեղեկատվական և Հեռահաղորդակցության Տեխնոլոգիաներ</i>	<i>14</i>	<i>86</i>
<i>Վաճառք</i>	<i>24</i>	<i>76</i>
<i>Բանկեր</i>	<i>38</i>	<i>62</i>
<i>Ֆինանսներ/հաշվապահություն</i>	<i>58</i>	<i>42</i>
<i>Մարքեթինգ</i>	<i>53</i>	<i>47</i>
<i>Վարչական /Մարդկային ռեսուրսների ղեկավարում</i>	<i>74</i>	<i>26</i>

<i>Մարդկային ռեսուրսների զարգացում</i>	<i>65</i>	<i>35</i>
<i>Շինարարություն/ անշարժ գույք</i>	<i>24</i>	<i>76</i>
<i>Կառավարում</i>	<i>17</i>	<i>83</i>
<i>Արդյունաբերություն</i>	<i>16</i>	<i>84</i>
<i>Այլ</i>	<i>45</i>	<i>55</i>

Կանանց և աղջիկների ՏՀՏ կարիերան ընտրելու ցածր մոտիվացիան բերում է տնտեսության համար տաղանդների կորստին և կանանց ու աղջիկների աշխատաշուկա մտնելու հնարավորությունների նվազման: Համաձայն ՏՏ զարգացման հայեցակարգի պլանավորված էր, որ ՏՀՏ աշխատուժը պիտի հասներ 12,000 2013թ-ին, սակայն իրական թիվը կազմեց 10,740 2013թ-ին: (Աղբյուր՝ ՀՀ ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգ 2008-2018թթ, Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն 2013թ., Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ):

ՀՀ ՏՏ զարգացման հայեցակարգով պլանավորված աշխատուժի քանակը (2008-2018) կարող է դառնալ իրատեսական մոտ ապագայում, եթե ավելի մեծ թվով կանայք ու աղջիկներ ներգրավվեն ՏՀՏ ոլորտում:

Հայաստանի բնակչության 32% ապրում է աղքատության մեջ ըստ 2013թ-ի Համաշխարհային բանկի հաշվետվության: Կանանց թիվը 15-75 տարեկան բնակչության մեջ կազմում է 1314 հազար, որոնցից միայն 41,1% է աշխատանքով ապահովված, իսկ տղամարդիկ կազմում են 1076 հազար, որոնցից 60 %-ը աշխատանք ունի: Քանի որ Հայաստանում ամսական միջին աշխատավարձը կազմում է 140,000 ՀՀ դրամ(ազգային վիճակագրային ծառայություն, 2013), որը մոտավորապես 300 ԱՄՆ դոլար է, այն բավարար չէ ընտանիքի հոգսերը հոգալու համար, եթե ընտանիքում միայն տան տղամարդն է աշխատում: Այդ իսկ պատճառով կանանց մասնակցությունը աշխատաշուկայում միայն մարդու իրավունքների հարց չէ, այլ տնտեսական հիմնահարց: ՏՀՏ ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների մեծ պահանջարկը յուրօրինակ հնարավորություններ է ստեղծում աղջիկների ու կանանց համար՝ բարձր վարձատրվող ՏՀՏ ոլորտ մուտք գործելու համար, ու ապահովում հաջողության հասնելու անհրաժեշտ միջոցներով:

Այսօր փաստ է, որ վերափոխվում է մեր հասարակությունն ու միջազգայնանում աշխատաշուկան, որ նշանակում է՝

- Օտարերկրյա ձեռնարկությունների գործունեությունը մեր երկրում:
- Տեղական ձեռնարկություններն աշխատում են արտերկրում,
- ՀՀ շրջանավարտները աշխատում են արտերկրում,

- Օտարերկրացիները աշխատում են տեղական շուկայում:

Աութսորսինգն ու օֆֆշորինգը (outsourcing and off-shoring) ՏՀՏ աշխատաշուկայի կարևոր բաղադրիչներ են դառնում: 2013թ-ին Հայաստանում տեղական շուկայի շրջանառությունը կազմել է \$245.7 միլիոն դոլար, իսկ արտասահմանումը՝ \$133.4 միլիոն:

Միջազգայնացման հետ միասին ավելի կարևոր է դառնում ՏՀՏ ոլորտի մասնագետների պատրաստումը: Գլոբալ մասշտաբով մրցակցային մարդկային ռեսուրսներ զարգացնելու համար՝ անհրաժեշտ է ՏՀՏ ոլորտի մասնագետների՝ այդ թվում աղջիկների ու կանանց, մեծ բանակ, ովքեր լավ կտիրապետեն տեխնոլոգիական զարգացումներին, բիզնեսի ոլորտի միտումներին ու կկարողանան ստեղծել մտավոր սեփականություն: Նպատակ հետապնդելով ունենալ տաղանդավոր ու միջազգայնորեն մրցունակ մարդկային ռեսուրսներ, հնարավոր կլինի ապահովել ազգային տնտեսության մրցունակությունը:

- ***ձեռներեցություն***

Համաձայն Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) հաշվետվության, 2013թ-ին գրանցված ձեռնարկությունների հիմնադիրների կամ տնօրենների 91%-ը տղամարդիկ են:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ Հայաստանում կանանց ու տղամարդկանց կրթական համեմատաբար բարձր մակարդակի պայմաններում, կին, տղամարդ նկատառումը գերիշխող առաջնահերթություն չունի: Հայաստանում բացակայում է տնտեսության զարգացման մեջ կանանց ներգրավվածության մասին վիճակագրությունը:

Երբ վերլուծվում են կին ձեռներեցների վիճակագրական տվյալները, ապա ըստ տվյալների գրանցված ձեռնարկությունների տնօրենների 32% կանայք են: Սա ըստ ուսումնասիրությունների չի արտացոլում իրական պատկերը, քանի որ տարածված երևույթ է՝ տղամարդիկ հաճախ գրանցում են իրենց բիզնեսները կանանց կամ աղջիկների անուններով ելնելով այն փաստից, որ կամ իրենց անունով արդեն գրանցված բիզնես ունեն, կամ էլ կնոջ անունով բիզնես ունենալը նվազեցնում է պարտքերի վճարման ռիսկը, քանի որ կանայք որպես կանոն քիչ եկամուտ են ունենում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանանց բիզնեսը իրականում 13% է կազմում: Համաձայն առկա տվյալների, կանայք հիմնականում ակտիվ են որպես ձեռներեցներ այն ոլորտներում որտեղ մուտք գործելու խոչընդոտները քիչ են, որտեղ հեշտ է կրկնօրինակել բիզնեսը, հաճախ երկարաժամկետ մրցակցությունը բացակայում է ու երբ շուկան արդեն հագեցած է:

(աղբյուր՝ Կանանց ձեռներեցության ռազմավարությունը Հայաստանում, մշակված ու ֆինանսավորված Ասիական զարգացման բանկի կողմից, ՓԵՄ Քընսալտ 2013թ):

Հաշվի առնելով վիճակագրական տվյալները, որոնք փաստում են, որ տնտեսության մեջ կին-գործատուների թիվը գրեթե 8 անգամ զիջում է տղամարդ-գործատուների թվին, ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդն առաջարկեց խրախուսել և հանրահռչակել գործարար կանանց:

2012 թվականից ի վեր Հայաստանում անցկացվում է ՀՀ վարչապետի «Լավագույն կին-գործարար» մրցանակաբաշխություն: Սակայն մեր հարցումներից պարզ դարձավ, որ SՀS ոլորտի և ոչ մի գործարար մասնակցություն չի ունեցել այս մրցանակաբաշխությանը:

SՀS ոլորտի կին ձեռներեցները սովորաբար հանդիպում են երեք հիմնական խոչընդոտների՝

- կարծրատիպային մշակույթներ ու կարծիքներ, ըստ որի ինովացիան/նորարարական ու տեխնոլոգիաները ասոցիացվում են որպես տղամարդու գործ,
- տնտեսական խոչընդոտներ՝ հիմնականում ֆինանսական գործիքների ու վարկերի հասանելիության դժվարություն,
- նորարարների, պոտենցիալ հաճախորդների ու ներդրողների ցանցերի անհասանելիություն, բիզնես դասընթացների, կանանց ինքնավստահության ու ռիսկի դիմելու բացակայություն:

Հաշվի առնելով այն փաստը, որ գործազուրկների 75% կանայք են, կանանց կողմից բիզնեսի հիմնումն ու իրականացումը կարող է նվազեցնել գործազրկությունը: Միևույն ժամանակ ավելի քիչ են կոռուպցիայի դեպքերը կանանց կողմից ղեկավարվող կազմակերպություններում:

Բիզնես ունենալու ներուժը շատ մեծ է կանանց համար, ուստի կանանց ձեռներեցությունն ու առաջնորդությունը տեղեկատվական հասարակության մեջ պիտի քաջալերվի:

Նպատակ հետապնդելով մեծացնելու կանանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների թիվը, խորհորդ է տրվում մտածել ՀՀ շրջանների դպրոցներում տեղեկատվություն (հանրային հասանելիության կենտրոններ) ստեղծելու մասին (դասերից հետո երեկոյան ժամերին) կամ էլ թվային գրադարաններում (դրանց առկայության դեպքում): Ինֆորմատիկայի ուսուցիչները կան օպերատորները կարող են դառնալ SՀS փոքր ձեռնարկությունների պոտենցիալ տերերը կամ ղեկավարները:

• Կրթություն

Աղջիկները՝ չնայած ունենալով բարձր գնահատականներ մաթեմատիկական և բնագիտական առարկաներից, հաճախ չեն խրախուսվում ընտանիքի, ուսուցիչների ու շրջապատի կողմից՝ SՀS ոլորտում կարիերա ստեղծելու համար:

Ըստ “SS հմտությունների գնահատումը Հայաստանում”, Համաշխարհային բանկի 2014թ-ի հունիսի համապարփակ հետազոտության՝ “SS ոլորտին հարող ֆակուլտետներում սովորողների ճնշող մեծամասնությունը տղաներ են”:

Ինչպես նշված է հետազոտության մեջ՝ “Ուսանողների թվային հավասարակշռությունը կիսախտվի՝ շրջանավարտների թիվը կնվազի, մոտակա մի քանի տարիներում հետևյալ փաստերից ելնելով՝

- Ռազմական բարեփոխումները, ըստ որոնց տղաները պարտադիր պետք է անցնեն զինվորական ծառայություն նախքան բարձրագույն կրթություն ստանալը: Մրա

արդյունքում դիմորդների թիվը կնվազի առաջին երկու տարիներին համապատասխանաբար կնվազի նաև ԲՈՒՀ ավարտողների թիվը 4-5 տարուց:

- Ուսանողների ցածր ընդունելությունը 2018-2019թթ` 2001-2002թթ ցածր ծնելիության արդյունքում:

Այս հետազոտության մեջ գենդերային հարցադրումը առաջնահերթություն չունի, փոխարենը կարելի էր դիտարկել, որ ՏՀՏ ոլորտում մեծ թվով բարձրակարգ մասնագետների պահանջարկը մեծ հնարավորություններ է ստեղծում կանանց ու աղջիկների համար բարձր վարձատրվող ՏՀՏ ոլորտում աշխատելու համար ու նրանց ապահովում է այս ոլորտում հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ միջոցներով, որով կլուծվի քանակական հավասարակշռման/բալանսի հիմնահարցը: Հարկ է նշել, որ աշխարհի առաջին համակարգչային ծրագրավորողը եղել է կին` Ադա-Բայրոն Լավլեսը (1815 - 1852):

• Առաջնորդություն

➤ Կին տնօրենները ղեկավարում են ՏՀՏ ընկերությունների 1.3%-ը: (Աղբյուր` Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն 2012թ, Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ):

Պատճառներից մեկը, որ ՏՀՏ-ն շարունակում է շատերի կողմից ընկալվել որպես տղամարդկանց գերիշխող ոլորտ այն է, որ այս ոլորտում բարձր վարձատրվող աշխատանքների մեծ մասը տղամարդիկ են զբաղեցնում, ուստի մեծ աշխատանք կատարելու այն ուղղությամբ, որ կանայք էլ զբաղեցնեն առաջնորդային դիրքեր տնօրենների խորհրդում/ներում և ղեկավարեն բարձր պաշտոններ:

Չնայած քիչ են ՏՀՏ ձեռնարկությունների կին առաջնորդները, սակայն կարող ենք նշել, այն կանանց ովքեր գերազանց դերային մոդելներ կարող են ծառայել երիտասարդ սերնդի համար:

- Մարի Լու Փափազյան` Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն
- Եվա Հյուսյան` Մայքրոսոֆթ Արմենիա տնօրեն
- Ժենյա Ազիզյան` ՉԻՀ նախագծի ղեկավար
- Գայանե Ստեփանյան` “Իդրամ” ՄՊԸ-ի տնօրեն
- Աննա Ենգիբարյան` Հայկական Վիրտուալ Համալսարանի ադմինիստրատիվ տնօրեն
- Սոֆի Մեհրաբյան` “Մակադամյան” ՓԲԸ -ի տնօրեն
- Ամալյա Եղոյան` Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի գլխավոր տնօրեն
- Մարիամ Դավթյան` Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի ղեկավար

• ՏՀՏ-ի հասանելիությունը գյուղական վայրերում

Հայ կանայք գյուղական վայրերում ապրում են ավանդական ընտանեկան դերերում առանց տարրական թվային գրագիտության: ՏՀՏ-ի ճիշտ կիրառումը նշանակում է լավացնել կանանց կյանքը: Գյուղատնտեսության մեջ աշխատող կանանց համար` շուկայի մասին օգտակար

տեղեկատվության արդյունքում, այն կնպաստի ավելի շատ ապրանքի արտադրությանը: Տնայնագործությամբ զբաղվող կանանց համար այն կնշանակի անհատ ձեռներեցություն, որը նոր հնարավորություններ կստեղծի արտադրության բարձրացման ու ընտանիքի եկամուտի համար: Այն կանանց համար, ովքեր փորձում են հավասարակշռության բերել ընտանիքն ու կարիերան, կնշանակի տանից աշխատել, որպես հեռաաշխատողներ:

Տեղեկատվությունները հանրային հասանելիության վայրեր են, հատկապես մեկուսացված կամ հեռավոր շրջաններում, որտեղ ՏՀՏ հասանելի չեն: Այս կենտրոնների օգնությամբ մարդիկ կարող են օգտվել համացանցից ու այլ թվային տեխնոլոգիաներից, որ նրանց թույլ կտան տեղեկատվություն հավաքել, ստեղծել, սովորել ու հաղորդակցվել:

2008թ-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ՏՏ սեկտորի զարգացման հայեցակարգը, որն իր գործողությունների ծրագրում տեղ է հատկացնում տեղեկատվություններին: Ըստ որի նախատեսվում էր տեխնիկապես զինել ու աշխատեցնել (նվազագույնը 100) տեղեկատվություններ ու համացանցային կենտրոններ ամեն տարի ընտրված վայրերում նվազագույնը 500 կենտրոն 5 տարվա ընթացքում (2008-2013), ապահովել մատչելի գնով համացանց գյուղական վայրերում, խթանել էլ. գրագիտությունն ու այլ էլ. ծառայությունները:

Աշխարհի լավագույն փորձը ցույց է տալիս, որ տեղեկատվությունների տնօրենների մեծ մասը կանայք են:

Մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ 500 կենտրոնների իրականացման մասին տեղեկատվությունը շատ սահմանափակ է: 2012թ-ին կենտրոնների թիվը 109 էր: (Աղբյուր՝ Հայաստանի կապի և ՏՀՏ ցուցանիշները ըստ Կապի տարածաշրջանային համագործակցության (ԿՏՀ), ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն 2011թ 2012թ)

ՏՀՀԳ-ի Ժնևի գործողությունների պլանում նշվում է, որ քաղաքականությունները, որոնք ստեղծում են բարենպաստ միջավայր կայունության, կանխատեսելիության ու արդար մրցակցության համար բոլոր մակարդակներում պիտի մշակվեն ու իրականացվեն այնպես, որ դրանք ոչ միայն գրավիչ լինեն մասնավոր ներդրողների համար՝ ՏՀՏ ենթակառուցվածքի զարգացման համար, այլ նաև թույլ տան, որպեսզի միջազգայնորեն ընդունված պարտականություններն իրականացվեն այն տարածքներում որտեղ ավանդական շուկայական պայմանները չեն գործում:

Հեռավոր շրջաններում ՏՀՏ հանրային կետեր կարելի է ստեղծել փոստատներում, դպրոցներում, գրադարաններում ու արխիվներում: Դրանք կարող են արդյունավետ միջոցներ դառնալ տեղեկատվական հասարակության ենթակառուցվածքներին ու ծառայություններին հասնելու համար:

Տեղեկատվությունների միջոցով, համայնքներում կանանց հզորացման համար հնարավորություններ են ստեղծվում՝ տեղեկատվության հասանելիության, ձեռներեցության, թվային հմտությունների ու գլոբալ թվային համայնքի անդամակցության շնորհիվ:

Ձեռնարկությունների կին տնօրենների թիվը մեծացնելու նպատակով, խորհուրդ է տրվում հիմնել տեղեկատվություններ մարզային դպրոցներում:

Կանայք կարող են տեղեկատվական հասարկության ձևավորման կարևոր դերակատարները դառնալ՝ բարձրացնելով լայնաշերտ համացանցի քաղաքականության կարևորությունը: Գիտակցելով, որ դպրոցները միացնելով լայնաշերտ համացանցին, մենք միավորում ենք երիտասարդներին ու համայնքի մյուս անդամներին գիտելիքի ու տեղեկատվության ձեռքբերման նպատակով, որը կբերի մարդկանց զբաղվածության ինչպես նաև սոցալական ու տնտեսական զարգացման:

Ինչպես հետազոտությունը ցույց տվեց, գենդերային բաղադրիչը լուրջ քննության չի ենթարկվում ու քանի դեռ տարանջատված գենդերային վիճակագրություն գրեթե գոյություն չունի, տվյալները հասանելի չեն լինի: Ընդամենը մի քանի աղբյուրների միջոցով են հավաքվում ՏՀՏ տարանջատված գենդերային տվյալներ:

ՏՀՏ ոլորտում անհրաժեշտ է ավելի շատ գենդերային վիճակագրություն՝

- Տեղեկատվական հասարակության բոլոր գործունեության ուղղություններով,
- հետազոտության,
- հեռահաղորդակցության ու ՏՀՏ ոլորտում որոշումներ կայացնելու մասնակցության,
- նորարարության,
- լայնաշերտ համացանցի հասանելիության,
- ցկյանս կրթության
- ՏՀՏ նախագծերի մասնակցության մասին՝ հատուկ շեշտը դնելով գյուղական ու հեռավոր շրջանների վրա:

4.2 Գենդերային բաղադրիչի ներառումը ՏՀՏ զարգացման ու տեղեկատվական հասարակության ձևավորման քաղաքականություններում

Գենդերային բաղադրիչը ներառված չէ ՏՀՏ զարգացման, տեղեկատվական հասարակության զարգացման հայեցակարգերում ու լայնաշերտ համացանցի ազգային ռազմավարության մեջ ՀՀ-ում:

Չնայած ՀՀ կառավարությունը ստորագրել է մի շարք միջազգային փաստաթղթեր ՏՀՏ ոլորտի զարգացման ու տեղեկատվական հասարակության ձևավորման գործողությունների շուրջ, հատուկ միջոցառումներ, որոնք խթանում են կանանց ակտիվ մասնակցությունը ՏՀՏ-ում չկան:

4.3 Հատուկ ծրագրեր ու միջոցառումներ գենդերային քաղաքականության 2011-2014 գործողությունների ծրագրերում՝ հաղթահարելու համար ՏՀՏ ոլորտում գենդերային անհավասարությունը

Գոյություն չունեն միջոցառումներ ու ծրագրեր գենդերային քաղաքականության 2011-2014թթ գործողությունների ծրագրերում, որոնք առնչվում են տեղեկատվական հասարակության ձևավորմանն ու ՏՀՏ սեկտորի զարգացմանը: Սույն հետազոտության շրջանակում, հետազոտողները պարզեցին, որ միակ համապատասխան բաղադրիչը մշակութային ու հանրային տեղեկատվության ոլորտում է, որը բավականին փոքր տարր է տեղեկատվական հասարակության սահմանման մեջ:

4.4 Բազմակողմ համագործակցություն գենդերային քաղաքականության ու գործողությունների ծրագրում SՀS բաղադրիչը ներառելու համար

Ըստ ՀՀ կառավարության “Գենդերային քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին” N5 որոշման (18.02.2010), նախարարություններին հանձնարարվել էր նախապատրաստել գենդերային քաղաքականության իրականացման գործողությունների ծրագրերը իրենց ոլորտներին համապատասխան: Սակայն ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարությունը չկա այս ցուցակում:

Մենք կարևորում ենք կառավարական մարմինների, միջազգային, դոնոր ու բիզնես կազմակերպությունների միջև համագործակցությունն ու կոորդինացիան՝ խնդիրները համատեղ լուծելու նպատակով:

Ինչպես նշվել էր 2.2 կետում, ՀՀ Տրանսպորտի ու կապի նախարարությունը Հեռահաղորդակցության միջազգային միության անդամ է 1992թ-ից ի վեր: Սակայն փաստացի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է կառավարության այն մարմինը, որը պատասխանատվություն է կրում SՀS, տեղեկատվական հասարակության ռազմավարությունների համար: Այդ իսկ պատճառով, համագործակցությունն ու կոորդինացիան անհրաժեշտ են կառավարական, միջազգային, դոնոր ու բիզնես կազմակերպությունների միջև՝ գենդերային քաղաքականության ձևավորման ու SՀS բաղադրիչով գործողությունների ծրագրերի կազմման ու իրականացման համար:

SՀS զարգացման ու տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարությունները գենդերային բաղադրիչով իրականացնելու համար ցանկալի է ամրապնդել երկարաժամկետ համագործակցություն հանրային ու մասնավոր սեկտորի, ակադեմիական հաստատությունների, ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների ու հասարակական կազմակերպությունների միջև՝ կապելով “գենդերային ու SՀS համայնքները”:

4.5 Գենդերային զգայուն SՀS ծրագրերը պլանավորման, բյուջետավորման ու դրանց իրականացման գործընթացներում :

Չնայած “Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին” օրենքի հոդված 8-ի

Հոդված 8. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ինչպես նաև **Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը,**
- գենդերային հավասարության ապահովման համար գործուն իրավական և կազմակերպական **մեխանիզմների ստեղծումը,**

- գենդերային հավասարության հասնելուն ուղղված պետական նպատակային ծրագրերի և միջոցառումների մշակումն ու իրագործումը և դրանց **Ֆինանսավորումը...**

Սակայն՝

Հետազոտությունը ցույց է տալիս, որ գենդերային զգայուն SՀS ծրագրեր ու համապատասխան մեխանիզմներ գոյություն չունեն:

Ֆինանսական հասկացումներ չկան գենդերային զգայուն SՀS ծրագրերի համար:

Միանալով ՄԱԿ-ի կանանց (UN Women) առաջարկությանը “2015-ից հետո Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովի տեսլականին”, մենք նույնպես առաջարկում ենք ստեղծել առանձին գործողությունների ծրագիր՝ “կանանց հզորացման ու տեղեկատվական հասարակության մեջ նրանց լիարժեք ներգրավվածության” համար:

5. Առաջարկություններ

Հետազոտությունն իրականացնելուց հետո մենք առաջարկում ենք հետևյալ առաջարկությունները SՀS և տեղեկատվական (էլեկտրոնային) հասարակության ու կանանց հարցերին վերաբերվող հայեցակարգերում ու միջոցառումների ծրագրերում՝

- *Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացումը կանանց համար հսկայական հնարավորություններ է բացում և կանայք պետք է դառնան տեղեկատվական հասարակության անբաժանելի մասն ու **կարևոր դերակատարները:***
- *“Կանանց հզորացման ու տեղեկատվական հասարակության մեջ լիարժեք ներգրավվածության” համար ստեղծել առանձին գործողությունների ուղղություն/ծրագիր (Միանալով ՄԱԿ-ի կանանց առաջարկությանը “2015-ից հետո Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովի տեսլականին”):*
- *Մշակել գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ՝ չափելու թվային անհավասարությունը SՀS հասանելիության (նաև բարձր արագության լայնաշերտ ինտերնետի, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական շրջաններում), աշխատուժի, առաջնորդության, ձեռներեցության և կրթության, տեղեկատվական հասարակության բոլոր գործունեությունների ուղղություններում (action lines) հատուկ շեշտադրմամբ գյուղական վայրերին:*
- *Սահմանել կարճաժամկետ, միջին եւ երկարաժամկետ ցուցանիշներ և հետևել դրանց իրականացմանը:*
- *Ցուցանիշներն ընդգրկել SՀS ծրագրերի պլանավորման, բյուջետավորման ու իրականացման գործընթացներում:*

- ՀՀ տեղեկատվական հասարակությունում կանանց հզորացման գործընթացների համար ռեսուրսներ հատկացնել, համապատասխան ներդրումներ անել ու դրանց մեծ ուշադրություն դարձնել:
- Պարբերաբար հավաքագրել ՏՀՏ-ում գենդերային զգայուն տվյալները: Վերլուծել, սահմանել թիրախներն ու օգտագործել դրանք ՏՀՏ ազգային գործողությունների պլանների ձևավորման ու իրականացման ժամանակ:
- Մշտադիտարկել կանանց հզորացումը ՏՀՏ-ում տարեկան հաշվետվության միջոցով:

Մշակել գործողությունների ու միջոցառումների ծրագրեր, որոնք կաջակցեն կանանց հզորացմանը օգտագործելով տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները՝

- Կազմակերպել կանանց թվային գրագիտությունը խթանող միջոցառումներ՝ տարբեր թիրախային խմբերի համար, հատկապես հեռավոր գյուղական բնակավայրերում:
- ՏՀՏ դարձնել ավելի հասանելի կանանց ու աղջիկների համար, հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական ու հեռավոր շրջաններին, նրանց հնարավորություն տալով ցլյանս ուսուցման՝ այն օգտագործելու իրենց, բիզնեսի և տնտեսության զարգացման համար:
- *Ամեն տարի չորրորդ ամսվա, չորրորդ շաբաթվա, չորրորդ օրը նշել ՏՀՏ աղջիկների միջազգային օրը:*
- Կազմակերպել “Կանանց հզորացումը ՏՀՏ-ի միջոցով” ամենամյա մրցանակաբաշխություն:
- *Մեծ ճանաչման արժանացնել տեխնոլոգիաների ոլորտներում կին առաջնորդներին, ովքեր փոփոխություն են մտցնում ՏՀՏ ոլորտում:*
- *Ստեղծել բանախոսների հիմնադրամ, որպեսզի ՏՀՏ ոլորտի կանայք՝ որպես դերային մոդելներ, կարողանան այցելել շրջաններ, հատուկ շեշտը դնելով հեռավոր գյուղական շրջանների վրա և հանդիպեն երիտասարդ աղջիկներին՝ ոգևորելու նրանց, որպեսզի նրանք ընտրեն իրենց ապագա կարիերան ՏՀՏ ոլորտում:*
- Սահմանել կրթաթոշակ ՏՀՏ ոլորտում սովորող լավագույն ուսանողուհիների համար:
- Սահմանել մի շարք սկզբունքներ ՏՀՏ ընկերություններում կանանց աշխատանքի ընդունման, գնահատման եւ խթանման ուղղությամբ, որոնցով ընկերությունները կառաջնորդվեն:
- Ստեղծել բազմաշահագրգիռ կողմերի հարթակ՝ միասնական քննարկումներ, միջոցառումներ ու հարցումներ կազմակերպելու համար՝ կանանց հիմնահարցերին լուծումներ տալու նպատակով:

- *Խթանել ներդրումները և աջակցել սկսնակ կին SՀS ձեռներեցներին, Տեղեկենտրոնների կին տնօրեններին, ովքեր զգալի թվով կրարձրացնեն կին ձեռներեցների թիվը:*
- *Աջակցել կանանց ղեկավարմամբ հանրային հասանելիության կենտրոնների ստեղծմանը:*
- *SՀS ոլորտում կին ձեռներեցների ու սկսնակ բիզնես կանանց հաջողված պատմությունների գրանցում ու լուսաբանում:*

Գենդերային բաղադրիչով SՀS զարգացման ու տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարությունները իրականացնելու համար ցանկալի է ամրապնդել երկարաժամկետ համագործակցություն հանրային ու մասնավոր սեկտորի, ակադեմիական հաստատությունների, ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների ու հասարակական կազմակերպությունների միջև՝ կապելով «գենդերային ու SՀS համայնքները»:

Սույն հետազոտության արդյունքների հիման վրա կատարված առաջարկությունները խմբավորված և ուղղորդված են հանրային, մասնավոր սեկտորներին, հասարակական կազմակերպություններին և միջազգային կառույցներին, որոնց աջակցությունն է ակնկալվում՝ նպաստելու **կանանց կարևոր դերակատարումը տեղեկատվական հասարակության կառուցման գործում:**

Մասնավորապես՝

- *Գենդերային հետազոտությունների և առաջնորդության ԵՊՀ կենտրոնի աջակցությունն ու միջնորդությունը ստանալ՝ վերը նշված առաջարկությունները ներկայացնելու համար Գենդերային թեմատիկ թիմին, որպեսզի դրանք քննարկվեն 2016-2020թթ-ի գենդերային ռազմավարական պլանի մշակման համատեքստում:*
- *Նախարարությունների աջակցությունը ստանալ, որպեսզի վերը նշված առաջարկությունները ներառվեն ռազմավարական հայեցակարգերում ու գործողությունների ծրագրերում: Մասնավորապես կազմակերպել քննարկում կլոր սեղանի շուրջ ՀՀ էկոնոմիկայի, տրանսպորտի ու կապի, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների համապատասխան մասնագետների հետ:*
- *Խորհրդատվություն ու ֆինանսական աջակցություն ստանալ միջազգային ու դոնոր կազմակերպություններից՝ իրականացնելու համար վերը նշված հայեցակարգերն ու գործողությունների ծրագրերն ու խթանել՝ կանանց ու SՀS համայնքների միջև՝ կապերը: Դրա վառ օրինակներից է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության աջակցությունն այս նախագծին:*
- *Միջազգային կազմակերպությունների կողմից աջակցություն ստանալ՝ լավագույն փորձի, ուղեցույցների ու խորհրդատվության տեսքով (ՀՄՄ, ՄԱԿ-ի կանայք, ՄԱԿ-ի կազմակերպությունները, ԵՄ և այլն):*
- *Մասնագիտական, կրթական հաստատություններից, ասոցիացիաներից ու հասարակական կազմակերպություններից աջակցություն ստանալ՝ խթանելու համար հայեցակարգերի ու գործողությունների ծրագրերի իրականացմանը,*

ներառյալ վիճակագրական տվյալների հավաքագրումն ու դրանց համակարգումը (ԻՏՁՄ, ՁԻՀ, ՀԱՀ, ԵՊՀ, Կանայք և տեղեկատվական հասարակությունը և այլն):

- Մասնավոր ՏՀՏ կազմակերպությունների աջակցությունը ստանալ՝ խթանելու համար հայեցակարգերի ու գործողությունների ծրագրերի իրականացման միջոցառումները՝ ներառյալ մասնագիտական ու ֆինանսական աջակցությունը՝ մրցույթների, ուսուցման, մրցանակաբաշխությունների ու այլ միջոցառումների կազմակերպման համար (ՏՀՏ ձեռնարկություններ):

6. Եզրակացություն

Հայաստանը կարիք ունի ավելի շատ խելացի մասնագետների, այդ թվում կանանց և աղջիկների ՏՀՏ ոլորտում: Չընդունելով որ կանայք և աղջիկները քիչ են ներկայացված ՏՀՏ զարգացման, քաղաքականության, դեկավարման մեջ, մենք սահմանափակում ենք մեր հասարակության հնարավորությունները: Կանայք և աղջիկները ոչ միայն պետք է աշխատատեղ փնտրեն, այլ իրենք ստեղծեն և առաջարկեն աշխատատեղեր և **լինեն կարևոր դերակատարներ տեղեկատվական հասարակության կառուցման գործում:** Դա իրականացնելու համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի աջակցությունը:

Բիզնես առաջնորդներն ու քաղաքականության մշակողները պիտի աշխատեն միասին, որպեսզի վերացնեն այն խոչընդոտները, որ կանայք հանդիպում են ՏՀՏ աշխատաշուկա մտնելու ժամանակ ու դրա փոխարեն ներդնեն այն փորձն ու քաղաքականությունները, որոնք հավասար հնարավորություններ կստեղծեն կանանց համար ՏՀՏ ոլորտում առաջնորդային պաշտոններ գրավելու համար:

Գենդերային բաղադրիչով ՏՀՏ զարգացման ու տեղեկատվական հասարակության ձևավորման ռազմավարությունները մշակելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ամրապնդել **երկարաժամկետ համագործակցություն** հանրային, մասնավոր սեկտորի, ակադեմիական հաստատությունների, ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների ու հասարակական կազմակերպությունների միջև՝ **կապելով “գենդերային ու ՏՀՏ համայնքները”**:

7. Հապավումների և գրականության ցանկ

Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության
ԳՀԱԿ	Գենդերային հետազոտությունների ու առաջնորդության ԵՊՀ կենտրոն
ԳՏՃՄ	գիտություն, տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն մաթեմատիկա
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԻՏՁՄ	Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն
ԿԿՑ	Կատարողականության կարևոր ցուցանիշներ
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄՄ	Հեռահաղորդակցության միջազգային միություն
ՁԻՀ	Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ
ՄԱԿ	Միացյալ ազգերի կազմակերպություն
ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	Միացյալ ազգերի կազմակերպություն զարգացման ծրագիր
ՏՀ	տեղեկատվական հասարակություն
ՏՀՀԳ	Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողով
ՏՀՏ	տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ
ՏՏ	տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՓՄՁ ՁԱԿ	Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն

Գրականության ցանկ

1. N70 Բանաձև (վերանայված Բուսան 2014) Գենդերային հավասարության հեռանկարները Հեռահաղորդակցության միջազգային միությունում ու գենդերային հավասարության խթանումն ու կանանց հզորացումը տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով, Հեռահաղորդակցության միջազգային միություն/ՀՄՄ/
2. Տեղեկատվական հասարակության համաշխարհային գազաթաժողովի վերջնական փաստաթղթեր՝ 2003-2005:
 - Ժննի սկզբունքների հռչակագիր,

- Ժնկի գործողությունների ծրագիր,
 - Թունիսի գազաթափողովում որդեգրած պարտավորվածություններ,
 - Տեղեկատվական հասարակության Թունիսյան օրակարգ:
3. ՀՀ ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգ 2008-2018թթ
 4. ՀՀ Էլ. հասարակության ձևավորման հայեցակարգ 2010-2012թթ
 5. ՀՀ Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ (2012-2020)
 6. ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ
 7. ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագիր 2011-2015թթ
 8. ՀՀ “Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին” օրենք, 2013
 9. Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի հետազոտության հաշվետվություն 2011թ., 2012թ., 2013թ., Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամ
 10. Կանանց ձեռներեցության խթանման հայեցակարգ, ՓՄՁ ԶԱԿ 2012թ.
 11. Օգտագործելով տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները աջակցել Կենտրոնական և Արևմտյան Ասիայի կին ձեռներեցներին, Ասիական զարգացման բանկ, մայիս 2014
 12. Թվային գրագիտությունը Հայաստանի ձեռներեց կանանց համար, Ասիական զարգացման բանկ, 2014
 13. Հայաստանում կին ձեռներեցների համար բիզնեսի զարգացման ծառայությունների կարիքների գնահատման հաշվետվություն, ՓՄՁ ԶԱԿ 2013թ
 14. ՀՀ գենդերային քաղաքականության միջոցառումների ծրագրերը, 2011, 2012, 2013թթ
 15. ՏՏ հմտությունների գնահատումը Հայաստանում, Համաշխարհային բանկ 2014թ
 16. Կանանց ձեռներեցության ռազմավարությունը Հայաստանում, մշակված ու ֆինանսավորված Ասիական զարգացման բանկի կողմից, ՓԵՄ Քընսալտ 2013թ
 17. Հայաստանի կապի և ՏՀՏ ցուցանիշները ըստ Հեռահաղորդակցության միջազգային միության, ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն 2011թ, 2012թ
 18. Հայաստանի կապի և ՏՀՏ ցուցանիշները ըստ Կապի տարածաշրջանային համագործակցության (ԿՏՀ), ՀՀ տրանսպորտի ու կապի նախարարություն 2011թ 2012թ
 19. Ազգային վիճակագրային ծառայություն, 2013

Հավելված 1. SՏՏ ոլորտի աղջիկների միջազգային օրը՝ Հայաստանում

“SՏՏ ոլորտի աղջիկների միջազգային օրը” երրորդ անգամ նշվեց Հայաստանում 25 ապրիլի 2014թ-ին: Տոնը հիանալի հնարավորություն էր ոգեշնչելու երիտասարդ աղջիկներին ընտրելու իրենց ապագա կարիերան տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (SՏՏ) ոլորտում: **“Ընդլայնենք հորիզոնները, փոխենք վերաբերմունքը”** ֆորումը տեղի ունեցավ Հայաստանի Ամերիկյան Համալսարանում (ՀԱՀ):

Ֆորումն ուներ երեք նպատակ՝ (ա) ընդլայնել հորիզոնները, փոխել դիրքորոշումները; (բ) փոխել գործող պրակտիկան (գ) մեծացնել աղջիկների ներգրավվածությունը SՏՏ ոլորտում, զարգացնել SՏՏ ոլորտը այն դարձնելով Հայաստանում կանանց ու աղջիկների համար որպես կարիերայի գրավիչ ընտրություն:

Օգտագործելով առկա տեխնոլոգիաները, համաշխարհային ցանցային լուծումների առաջատար Cisco ընկերության աջակցությամբ, ֆորումը հասանելի դարձավ մարզերին օնլայն: Մասնակցում էին 47 ուսումնական հաստատություններից՝ 19 –ը Երևանից, 7 –ը Երևանի մոտակա շրջաններից և 21 –ը օնլայն ինը մարզերից, այդ թվում Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոնը հյուրընկալել էր մի քանի դպրոցների: Ֆորումին օնլայն միացել էին ոչ միայն Հայաստանի շրջանները, այլ Լոնդոնի և Մինսկի Cisco ակադեմիաները, վերջինս էլ ապահովում էր օնլայն կապը:

Ֆորումում ելույթ ունեցան SՏՏ ոլորտի հաջողակ կանայք տարբեր կազմակերպություններից՝ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագիր, Մայքրոսոֆթ Ինովացիոն կենտրոն, Հայաստանի Ամերիկյան Համալսարան, Հայկական Վիրտուալ Համալսարան, CISCO ցանցային ակադեմիա, “Իդրամ” ՄՊԸ, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիա, Ֆիզմաթ դպրոց, Հայ-հնդկական SՏՏ գերազանցության կենտրոն, Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն:

Ներկաները հետաքրքրությամբ դիտեցին տեսանյութը՝ Սպիտակ տան “SՏՏ հասանելիության փոփոխությունների չեմպիոն” տիտղոսակիր, “Կոմփուզլս” ընկերության հիմնադիր և գլխավոր տնօրեն Քեմբերլի Սկոտը (ԱՄՆ) տեսաուղերձով հանդես եկավ Հայաստանի աշակերտուհիների և ուսանողուհիների համար:

Ֆորումը իրականացվեց ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հովանու ներքո, Հեռահաղորդակցության միջազգային միության տեղեկատվական աջակցությամբ, «Կանայք և տեղեկատվական հասարակությունը» ՀԿ նախաձեռնությամբ:

Երեք տարիների գործընկերներն են եղել՝

- Հայաստանի ամերիկյան համալսարանը,
- Cisco, ցանցային ոլորտի համաշխարհային առաջատար կազմակերպությունը,

- ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագիր
- Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ
- Հայ-հնդկական S2S գերազանցության կենտրոն
- Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիա
- Մայքրոսոֆթ Ինովացիոն Կենտրոնի
- Ռոստելեկոմ, (ՋԻԷՆՄԻ ԱԼՖԱ)
- ՎիվաՄեյլ - USU
- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի
- Իդրամ Ինտերնետ վճարային համակարգի օպերատորի

Ֆորումից հետո նախապես մշակված հարցաթերթ բաժանվեց մասնակիցներին՝ կարծիքների, մեկնաբանությունների ու առաջարկությունների համար: Հարցաթերթի պատասխանները ցույց տվեցին, որ

- Հարցման մասնակիցների 95 % -ը գտնում է, որ միջոցառումը գերազանց կամ շատ լավ էր կազմակերպված:
- Հարցման մասնակիցների 52% -ը կցանկանար ավելին իմանալ այս ոլորտի մասնագիտությունների մասին:
- Մասնակիցների մեկ երրորդը ցանկություն հայտնեց S2S ոլորտում մասնագիտություն ընտրելու:
- Եղան առաջակներ՝
 - Ամեն տարի նշել S2S աղջիկների օրը:
 - Ելույթ ունեցողների մեջ ներառել նաև աշակերտուհիների:
 - Այցելել S2S կազմակերպություններ:
 - Կազմակերպել S2S ուսուցում մարզերում:
 - Կազմակերպել հանդիպումներ այս ոլորտի հաջողակ կանանց հետ:
 - Աշակերտուհիների համար հայտարարել Ադա Լովլասի անվան մրցանակաբաշխություն:

Նմանատիպ հարցաթերթ բաժանվեց նաև Արիզոնայի պետական համալսարանի ուսանողների շրջանում: Արիզոնայի պետական համալսարանի ու Հայաստանի հարցաթերթերի արդյունքները համեմատվել են: Հարցաթերթի մի օրինակ կցված է սույն հաշվետվության վերջում:

Լրացուցիչ մանրամասների համար տես հետևյալ վեբկայքերը՝
<https://www.facebook.com/WomenandIS>, <http://girlsini.org/ru/node/3909>.
 Երկրորդ հղումը տրամադրվել է ՀՄՄ-ի կողմից:

Հավելված 2 Թվային գրագիտությունը Հայաստանի կին ձեռներեցների համար

Այսօր S2S- ի միջոցով ստեղծվում են ավելի և ավելի արժեքավոր գործիքներ ձեռներեց կանանց համար: Տեխնոլոգիաները առաջարկում են նոր հնարավորություններ գործարար կանանց համար՝ բիզնես սկսելու ու զարգացնելու համար: Նոր և ավանդական միջոցներով ձեռներեց կանայք հասնում են հաճախորդներին, ավելի արդյունավետ ձևով զարգացնում բիզնեսը, որ չէին կարող անել մինչ այդ: Շատ կարևոր է աջակցել հատկապես գյուղական շրջանների ձեռներեց կանանց՝ օգտվելու տեխնոլոգիաների այս հնարավորություններից և մասնակցելու տեղեկատվական տնտեսության զարգացմանը: S2S-ն կարող է լավացնել գյուղատնտեսական ապրանքների մասին պոտենցիալ գնորդներից և վաճառողներից ստացվող ինֆորմացիայի հավաքման, վերլուծության և տարածման գործընթացը:

“Թվային գրագիտությունը Հայաստանի ձեռներեց կանանց համար” դասընթացը կազմակերպվեց Հայաստանի գյուղական շրջանների կին ձեռներեցների համար, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ:

Դասընթացի ամբողջական հաշվետվությունը կարելի է ներբեռնել հետևյալ կայքից՝
<http://www.adb.org/sites/default/files/project-document/151626/45230-001-tacr-03.pdf>

Questionnaire

On Celebration of "Girls in ICT" International Day

Age: 22

Specialty: *civil engineering*

BA/MA: BA

University: *ASU*

State: *AZ*

Date: *April 21st*

1 How have new Information and Communication Technologies (ICT) changed your life?

Use smart-phones and touch screens to make things easier

2 What does mobile phone mean to you?

EVERYTHING!

3 What is the function/role of the Internet in your life?

The main source of information

4 Did you study an ICT subject (computer studies) at school?

Yes

No

If you answered yes, what did you like most about the subject(s)?

5. Who influenced your career selection?

Parents

Teachers

Role models, please specify

Friends

Other, please specify

6. Have you ever considered ICT as a career option?

Yes

No

7. Do you have any suggestions how to make ICT subjects and careers more appealing?

Making things attractive to the new generations.

8. Do you find it helpful having role models speak about their experiences in ICT?

Sure, it is

9. Do you know of someone (women), who is involved in ICT in some way that you could see as a role model?

No!

10. How could celebration of "Girls in ICT day" be helpful for career selection and development?

That's an attractive event for all females.

11. What element(s) of the event would you propose?

Robotics

Games Development

Essay Writing Competition

Multimedia

Training Session

Role models speak

TV shows

Discussion on Facebook or on website

Prizes

Biomedical

Visits to ICT companies

other, please specify

12. Other comments:

Engineering / Nano technology

Thank you for your participation